ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

07 .06. 2024 թ. *ք. Իջևան*

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում են գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Գ. Միրոյանը, Գ.Հովհաննիսյանը, Թ. Վարդանյանը, Ա.Պոտոսյանը, Ա. Մուրադյանը, Ա.Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ.Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԳ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, ՈՒԽ նախագահ Ս. Վարդապետյանը, Զ. Հարությունյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Օրակարգ

1. *Իրականացված ուսումնական և արտադրական պրակտիկաների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացման մասին(զեկ. Գ. Միրոյան, Գ. Հովհաննիսյան)*
2. *Կրթական ծրագրերի վերանայման հանձանաժողովի աշխատանքների կատարման ընթացքիմասին (զեկ. Գ. Միրոյան, Թ. Վարդանյան):*
3. *Ֆալուտետի մասնագիտությունների ուսումնական պլանների քննարկման և հաստատման(2024-2025) մասին(զեկ. Գ. Միրոյան, Գ. Հովհաննիսյան, Թ. Վարդանյան):*

1. Լսեցին. - Իրականացված ուսումնական և արտադրական պրակտիկաների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում(զեկ. Գ. Միրոյան, Գ. Հովհաննիսյան)

Գ. Միրոյանը հաղորդեց, որ 2023-2024 ուստարվա մասնագիտական պրակտիկան կազմակերպվել է «ԵՊՀ ԻՄ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման» կարգի և «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) III և IV (առկան) և IV և V(հեռակա) կուրսերի կրթական ծրագրի ուսումնական պլանի համաձայն: Պրակտիկայի նպատակն է խորացնել մասնագիտական գործնական հմտությունները և հնարավորություն տալ համակարգված տնտեսագիտական գիտելիքները և կարողությունները կիրառել գիտական և պրակտիկ մասնագիտական գործունեության մեջ: Վերոնշյալ նպատակն իրագործելու համար, ինչպես ներկայացրեց Գ. Միրոյանը, մշակվել է պրակտիկայի կազմակերպման պլան, որում մանրամասնված է եղել աշխատանքների օրացուցային գրաֆիկը. նախապատրաստական փուլը, հանդիպումների օրերը պրակտիկայի վայրում և մասնաճյուղում, պաշտպանության օրը, ներկայացվող պահանջները, ուսանողների աշխատանքային հարցաշարը: Պրակտիկայի

արդյունքների ամփոփումը կատարվեց ուսանողների հաշվետվությունների պաշտպանությամբ: Պաշտպանությունը իրականացվեց ուսումնասիրությունների և հետազոտության արդյունքների հակիրճ ներկայացմամբ: Ուսանողները պատշաճ կերպով ներկայացրին պրակտիկայի ընթացքում իրենց կատարած աշխատանքները, վերլուծությունները, աշխատանքային առօրյան, ինչպես նաև՝ ավարտական աշխատանքներում օգտագործած նյութերը:

Գ. Սիրոյանը հաղորդեց, պրակտիկայի հաշվետվություններն առաջին անգամ ներկայացվեց MOODLE հարթակում: Կարելի է արձանագրել, որ տվյալ ձևաչափով իրականացնելը ուներ և դրական, և բացասական կողմեր: Դրական կողմերից էր ուսանողների հաշվետվությունների տեղադրումը շաբաթվա կտրվածքով և արագ արձագանքումը: Բացասականը՝ ուսանողների կողմից Moodle հարթակի գործիքների ոչ լիարժեք տիրապետումն էր: Սակայն առաջին փորձը հնարավորություն տվեց ուսանողներին սեղմ ժամկետներում իրականացնել իրենց առջև դրված հանձնարարությունները:

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ պրակտիկայի նպատակն է ուսանողներին մասնակից դարձնել զբոսաշրջության ոլորտի աշխատանքին, հնարավորություն տալ ինքնուրույն կերպով կազմակերպել առանձին ծառայություններ (հյուրերի ընդունում, գործունեության կազմակերպում, ճանապարհում), ճանաչողական, էկոլոգիական, մշակութային և այլ տեսակի զբոսաշրջության կազմակերպում: Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ ուսանողները նախապես ծանոթացել են պրակտիկայի ծրագրին և ստացել են հանձնարարականներ՝ նախքան համապատասխան կազմակերպություններ այցելելը: Պրակտիկայի պլանը կազմվել է յուրաքանչյուր կազմակերպության առանձնահատկությունների հաշվառմամբ: Ուսանողների հետ հանդիպման ժամանակ ներկայացվել է պրակտիկայի անցկացման կարգը, յուրաքանչյուրին տրվել է օրագիր և պրակտիկայի պլան (ղեկավարի հանձնարարական): Պրակտիկայի ընթացքում ուսանողներն ակտիվորեն մասնակցել են կազմակերպությունների աշխատանքներին, իրականացրել են ուսումնասիրություններ, հավաքել են տեղեկատվություն ավարտական աշխատանքների կատարման համար, մասնակցել են իրականացվող գործարքներին:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Իրականացված պրակտիկաների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացումն ընդունել ի գիտություն:

2. Լսեցին. - Կրթական ծրագրերի վերանայման հանձնաժողովի աշխատանքների կատարման ընթացքի մասին (զեկ. Գ. Միրոյան, Թ. Վարդանյան):

Գ. Միրոյանը հաղորդեց, որ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքային պլանով սահմանված գործողությունների հիմնական քայլերը, իրականացման վերջնաժամկետները, վերջնարդյունքները և կատարողականի ցուցիչները:

Կազմվել և հաստատվել է «Ֆինանսներ» կրթական ծրագրի Վերամշակման աշխատանքային խումբ՝ համապատասխան աշխատանքային խմբի օրացուցային պլանով:

Մշակվել են Վերանայման խմբի գործողությունները և դրանց ժամկետները: Ծրագրում դասավանդող դասախոսները, ուսանողները և արտաքին շահակիցները ներկայցրել են իրենց առաջարկները կրթական ծրագրի վերաբերյալ: Հիմնվելով ներկայացված առաջարկությունների վրա՝ վերանայվել են ինչպես կրթական ծրագրի մասնագիտական պարտադիր և կամընտրական առարկաները, այնպես էլ առարկայական ծրագրերը: Մասնավորապես, ներմուծվել են նոր՝ «Ֆինանսների հիմունքներ», «Ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ», «Ֆինանսական կարգավորում» առարկաները, իսկ «Հանրային ֆինանսներ» և «Հաշվապահական հաշվառման ծրագրեր» առարկաները կամընտրական կառուցամասից տեղափոխվել են պարտադիր դասընթացների մաս: Վերանայվել ու թարմացվել են նաև մի շարք առարկաների ժամաքանակները և դրանց առարկայական ծրագրերը: Վերանայված կրթական ծրագիրը թույլ կտա ուսանողին ավելի ընդարձակ տեսական և գործնական մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերել և դառնալ ավելի մրցունակ:

Դիտարկվել են ԿԾ-ի վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքները, շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքները, ծրագրի շահակիցների արձագանքը, համագործակցային կապերը, ծրագրի փոփոխությունները, ծրագրի վերանայման և արտաքին գնահատման արդյունքները:

Հիմք ընդունելով Վերանայման խմբի դիտարկումները և վերլուծության արդյունքները, մասնավորապես՝ կրթական ծրագրի բացթողումներն ու խոչընդոտները, վերջնականապես մշակվել է
«Ֆինանսներ» կրթական ծրագիրը: Կրթական ծրագրին համապատասխան մշակվել է նաև նոր ուսում նական պլանը:

Թ. Վարդանյանը հաղորդեց, որ հաշվետու 2023-2024 ուստարում իրականացվել

են

«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքային պլանով սահմանված կրթական ծրագրի մշակման, իրականացման, մշտադիտարկման և վերանայման նպատակով նախատեսված գրեթե բոլոր աշխատանքները: Կազմվել և հաստատվել է «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի վերամշակման աշխատանքային խումբ՝ համապատասխան աշխատանքային խմբի օրացուցային պլանով:Մշակվել են Վերանայման խմբի գործողությունները և դրանց ժամկետները: Ծրագրում դասավանդող դասախոսները, ուսանողները և արտաքին շահակիցները ներկայցրել են իրենց առաջարկները կրթական ծրագրի վերաբերյալ: Վերանայվել են կրթական ծրագրի նպատակները, խնդիրները, վերջնարդյունքները և դրանց գնահատման բաղադրիչները:

Թ. Վարդանյանը նշեց,որ կրթական ծրագրի բարելավման հարցում չափազանց կարևոր ներդրում է ունեցել Մոնիտորինգային խումբը: «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի մոնիտորինգ առաջին անգամ է իրականացվել: Այդ նպատակով դիտարկվել են ԿԾ-ի վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքները, շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքները, ծրագրի շահակիցների արձագանքը, համագործակցային կապերը, ծրագրի փոփոխությունները, ծրագրի վերանայման նարտաքին գնահատման արդյունքները:

Վերանայման խմբի և Մոնիտորինգային հանձնաժողովի դիտարկումները և վերլուծության արդյունքները, մասնավորապես՝ կրթական ծրագրի բացթողումներն ու խոչընդոտները, հիմք են հանդիսացել «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի փոփոխության համար: Կրթական ծրագրին համապատասխան մշակվել է նաև նոր ուսումնական պլանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 9 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Կրթական ծրագրերի վերանայման հանձանաժողովի աշխատանքների կատարման ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

3.Լսեցին.- Ֆալուտետի մասնագիտությունների ուսումնական պլանների քննարկման և հաստատման(2024-2028) մասին(զեկ. Գ. Միրոյան, Գ. Հովհաննիսյան):

Գ. Միրոյանը հաղորդեց, որ «Ֆինանսներ» կրթական ծրագրի ընդհանուր կառուցամասում առանձնապես փոփոխություն չի իրականացվել, նախորդ տարի ավելացվել են կամընտրական չորս դասընթաց, մասնագիտական կառուցամասի պարտադիր դասընթացներից «Դրամավարկային քաղաքականություն»-ը հանվել է, «ՀՀ հարկային համակարգ», «Մենեջմենթի հիմունքներ», «Մարքեթինգի հիմունքներ» դասընթացները դարձել են կամընտրական, 8-րդ կիսամյակում ներառվել է «Ապահովագրական գործ»-ը, ավելացել է «Հաշվապահական ծրագրեր» դասընթացը, որպես

կամընտրական։

Վերանայվել են ծրագրի դասընթացների նկարագրիչները։ Բարձր կրեդիտները տրվել են մասնագիտության համար առանցքային նշանակություն ունեցող դասընթացներին, որոնք ընտրվել են դասախոսական կազմի մեծամասնության առաջարկով։ Դասընթացների մեծ մասում, նույնպես դասախոսական կազմի առաջարկով, գնահատման չափանիշում մասնակցության միավորը տրվել է ընթացիկ ստուգմանը և ինքնուրույնին աշխատանքին։

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ 2024-2028 ուստարվա «Զբոսաշրջություն» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է ելնելով նախորդ տարիների ուսումնական պլաններից և ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին։

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ ուսումնական պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ, մասնավորապես դասընթնացների կրճատմամբ, որը կարող է դրական ազդել ուսանողի ընդհանուր բեռնվածության վրա։

Արտահայտվեցին –Թ. Վարդանյան

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.9 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշում.- Հաստատել ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական աշխատանքային պլանները(2024-2028)։

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Ա. Մարգարյան***
Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***